Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի 2023 թվականի ապրիլի 14-ի N399 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 11-ի N104- N107, 2023 թվականի ապրիլի 12-ի N108-N112, 2023 թվականի ապրիլի 14-ի N113 որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N104-Ա, N105-Ա N106-Ա N108-Ա N109-Ա N110-Ա N113-Ա որոշումների մեջ անհրաժեշտ է տեղեկատվություն գրառել նաև անշարժ գույքի սեփականատերերի վերաբերյալ։
2. N112 որոշման հերթական համարից հետո համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ կետի 2-րդ մասի՝ անհրաժեշտ է նշում կատարել որոշման բնույթի մասին, բացի այդ որոշման նախաբանում հղումները թերի են գրառված։
3. N104-N106 և N113 որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ.Գրիգորյան
1 հունիսի 2023թ